Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Ltn
1898

1999

ԴՐԱԽՏԱՀԱՐՍ

# ՄԱՐԻ ՏԱՅԵԱՆ

ԳՐԵԱՑ

Յ. Կ. ՍՎԱՃԵԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

1543



Гос. библиотека

ԶՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ
1875

2զ. 1905

գ 1898-ճo

# ՆՈՒԷՐՔ

ԱՌ

# ՄԵԾԱՐԳԻ Պ. ՊԵՏՐՈՍ ՏԻԼՊԵՐ

Մեծարգի Պ. Պետրէ Տիկլէր,

Ում կարէի ձօնել զայս ճագագ սրտաբուխ, կամ նուագ դուզնաքի, թէ ոչ՝ առ Ձեզ, որ կարի յոյժ վշտագնեալ յողբալի մահ սիրասնունդ խօսեցելոյ ձերոյ արտասուս հեղուք 'ի մատաղ տիս . . . :

Այլ, օն անդր, ընդէր չարաչարել, աստանօր, բանս սրտմայուշ . նէ փայլի յերկինս, եւ դուք կացէք մխիթարեալ :

Ծլի վարդն եւ ծաղկի, եւ սփռէ հոտ քաղցրաբոյր, սակայն զայ ժամն, եւ հասանի արեւն միջօրէի դնել զնա 'ի թառամ, թարշամ . . . : Եւ սոխակն մնայ վշտաբեկ, յոյր ճիւղն կեցեալ դայլայլէր երգով քաղցրագին :

Ո՞չ տիրեացէ, միթէ, գիշերն երկիթամած գեղածիծաղ առաւօտուց :

Ո՞չ գայ, միթէ, խորշակն տօթակէզ հարկանել զգողտըր թերթս ծաղկանց, որք փթթին յոռոգ թացեալ ցօղով երկնայնով :

Ո՜հ, Պետրէ, աստանօր չիք ինչ անեղծ, չիք ինչ անանց եւ անտխուր :

Սակայն չէ սպառ ողբալ, նէ փիւնիկ է վերակենդան, անկեալ 'ի հող կամ 'ի մոխիր, այլ յարիցէ, կամ յարեաւ :

Սապէս, Մարին, կոյսն նազելի, անկաւ 'ի հող որպէս փիւնիկ . 'ի հող սուզաւ, այլ այնպէս՝ որպէս Ալկիոյնն սուզի 'ի ծով . . . :

Նէ զարթեա՛ւ . նէ կայ 'ի դրախտն Ադինական ուր պանծան կուսանք վաղամեռ, յաւերժահարսունքն Եդեմի :

18 Յունվար 1875
'ի Զմիւռնիա

Յ. Կ. ՍՎԱՃԵԱՆ

Մեծարգոյ Պ. Յ. Կ. Սվաճեան,

« Դրախտածարս Մարի Տայեանն » Ձեր սրտառուչ Երգը, զոր ինձ 'ի սփոփանս կը նուիրէք, կ'ընդունիմ ճիշտ այն զգայուն ոգւով՝ որով զգացուած եւ շարադրած էք :

Կարծելով մեղմել զիմ վիշտ՝ աւելի բոցավառ. կ'արծարծէք զայն յիս, երբ Ձեր սոյն սրտառուչ նուագաւ անդրադառնալ կու տաք ինձ զգալու. թէ ա՛յնքան մեծ է իմ կորուստ մինչ զի անծանօթք անգամ կարեկցութեան կը փութան :

Այո՛, Մեծարգոյ Սիրելի, ցարդ անծանօթ էիք ինձ, այլ յայս Նուագ՝ Ձեր հոգւոյ ընտիր եւ սուրբ զգացմունքն ընթերցայ ու լիուլի վայելեցի, զոր Ձեր բնատուր բանաստեղծական գրչաւ ա՛յնպէս գողտր նկարագրած էք՝ մինչ 'ի նմին կը տեսնեմ զիմ Հրեշտակատիպ Սէր, եւ զիս իսկ :

Հուսկ կը խոստովանիմ, զի եթէ Ադենական անճառ Դրախտն յափշտակեց ինձմէ զիմ Հրեշտակատիպ Սէր, սակայն ընծայեց ինձ նաեւ իւր Հրեշտակալեզու մանկանց մին, ինչպէս երգած էք, Որփեան գրաւիչ քնարաւ, թմբրեցնել զիմ վիշտ :

Յուսով քաղցր է ինձ Հրեշտակալեզու մանկանդ Քնարը խրախուսել, տալով 'ի լոյս Ձեր սոյն Քերթուածը, եւ պարգեւել Ձեզ զայն 'ի տրիտուր, որով անմահանայ Երգը, Երգուածը, եւ Երգողը 'ի մխիթարութիւն

Բարեկամիդ

ՊԵՏՐՈՍԻ Կ. ՏԻԼՊԷՐ

30 Յունվար 1875
'ի Զմիւռնիա



# ԴԱՍՈՒԵՐԳ

Դուք մահացուք, ընդէ՞ր խռովիք,
Եկայք ընդ հուպ ողետու՝
Մահճի կուսին հոգեվարին,
Ո՜ ի՛նչ տեսարան սրտառու։

Շող կը կաթէ, անդ, սրտերնիդ,
Եւ կայք յակձիռ խոր խոհով,
«Սա կոյս աղջիկ ծաղկափթիթ
Ասէք, մեռնի՞ հապճեպով»։

Սակայն աղջիկն այն սիրասուն,
Թռիչ տալ կամի 'ի յանմահ
Դրախտն անճառ՝ ուր կան համբուն
Կոյսերն աղու վաղամահ։

Այսպէս, Մարին, կոյս չքնաղ
Տեսիլն ամբիծ կրկնագեղ,
Կամի լինել դրախտակենցաղ,
Յաւերժահարս լուսագեղ։

Ուստի հրեշտակ մ'երկնադեսպան
Եհաս յերկնուստ հուր կառքով,
Մերձ անկողնոյ մահասեղա՛ն
Կեցաւ ճերմակ հանդերձով։

Ընդ բոցի պէս կը ծածանէր
Հուր էր, լոյս էր երկնային,
Եւ սոսափէր անդ տարուբեր
Նըրբի՛ն զանգուրն հրեշտակին:

Ձեռքն էր բռնած փունջ մի ծաղիկ,
Վարդ, մանուշակ, և շուշան,
Դրախտէն քաղած էր այն փունջիկ,
Հրաւէրի էր նա նշան:

Եւ զի՞նչ ասէր զուարթուն չքնաղ
Դրախտադեսպան հուրն այն լոյս,
Եդենապերճն այն ծաղկաքաղ
Առ կոյս Մարին, ՚ի խրախոյս:



## ՆՈՒԱԳ ԱՌԱՋԻՆ

### ՀՐԵՇՏԱԿ

Ինձ միտ դիր, դու, ո՛վ կոյս Մարիդ,
Պատմեմ քեզ փառքն Եդենին,
Հոն պարտէզ կայ մշտափթիթ,
Ընդ անտառ կայ դիւթային:

Եկո՛ւ, թռչիմք, ելնեմք յերկին
Եդեմականն ՚ի դրախտ,
Մերկացի՛ր զեղդ, առ զայն հողէն,
Դրախտն է անմեռ զեղն և բաղդ:

Եկու սիրուն կոյս նազելի,
Յաւերժհարսից ՚ի հոյլ մեր,
Թող զայս աշխարհն եղծանելի,
Յակումբ հարսից եկ անմեռ —:

Մինչ զայս լսեց կոյսն հոգեվառ,
Հրեշտակադէմըն Մարին,
Հուր փայլեցան աչկունքն աղու,
Ժպիտ տիրեց շրթունքին:

## ՄԱՐՏ

Ասաց — հրեշտակ եկող անմեղ
Դու՛ նուիրակ դրախտենի,
Ընձկամ լսել զեկրն յիս զ՛եղ
Պատմէ փառքերն Եդեմի:

Չեմ դեռ ակահ դա վեհ դրախտին
Ուր պար խաղան երկնուհիք,
Չեմ դեռ տեղեակ այդ Եդենին
Ուր կան անտառք դիւթային —:

## ՀՐԵՇՏԱԿ

Ընդ խնկաբեր և հոտաւէտ,
Պուրակք անտառք դիւթային . . .
Ուր մրմնջեն միջեն յաւէտ,
Սիրահմայքն_աղաւնիք:

Բարձրակատար, անդ, 'ի նոճիս,
Երգեն պլպուլք սխրալինք,
Ուր 'ի թաւուտ, ու 'ի հոծ մայրիս
Հեզիկ վուն՛ն վարուժանք:

Եւ ձինաթոյր աղուոր տատրակք
Ընդեռ հաւփալք դրախտաստուն,
Կեղեջաճայն առնուն նուագ
Եւ տան սրտից հեշտութիւն:



Կան մրտենիք մշտադալար,
Գոյն գոյն ծաղկունք են նարօտ,
Կանաչապանծ է անդ ծաւալ
Դալարադեղ մարգարօտ:

Նոճիքն հսկայ մայրիք ճղու որ
Ընտառ կաղմեն սրտաթով·
Նոցա մէջէն ոլոր գլոր
Հեղու մ'առուակ մշտաղով:

Կարկջեն ալիքն հեշտամռունջ
Վէտ՝ վէտ կոհակքըն ծփան,
Բոյսերն համբուն, ծաղկունք փունջ փունջ
Յուռդ ս'առուակէն թանան:

Ծաղկեղանակ տիրէ գարուն,
Վախճանն անտօթ, անամառ
Ողջոյնն հեշտի՛ն ամբողջ բնութիւն
Ընմահ որրան անապառ:

Եղենարոյս լի վարդ կարմրիկ
Ընուշահոտ գոյնզգոյն,
Յակինթ, շուշան, կակաչ, յասմիկ,
Եւ մանիշակ երկնագոյն:

Ահա շուշանն, վարդ մանիշակ,
Փունջ մի կազմեալ կոյսդ անմեղ,

Բերի առ քեզ զինչ հրաւիրակ,
Զքնաղ Մարիդ շնորհաշէղ —։

Եսաց զուարթունն փունջն ձօնեաց
Հրաշադիմակ Մարիին,
Եւ ժպտեցաւ, կոյսն անձկաց
Դնել 'ի լանջ վարդագին։

ՄԱՐԻ

Տուր ինձ ծաղկունսն Եդենաբոյս,
Ո՛վ զուարթուն դու անմեռ,
Տուր ինձ, ասաց, ո՛վ երկնի լոյս,
Օրհնեա՛լ հրեշտակ ծաղկաբեր։

Դրախտի ծաղկո՞նքն . . . են հրաշալի.
Նորա փունջերն՝ են վսեմ,
Նոցա վերայ Աստուած ժպտի
Զուարթունք հսկեն 'ի յԵդեմ։

Թո՛ղ համասպրամ բուրե՛ն հոտեր,
Թո՛ղ բոյր սփռէ այդ փունջիկ,
Կամիմ վայել զայդ ծաղկներ,
Սրսկէ՛, սփռէ՛, զուարթնիկ։

Եւ զուարթունն փունջն դրախտի,
Սրսկեց 'ի գէտնն դալար . . . ։



Եւ բոյր էած յերես կուսի,
Պերճ Մարիին հոգեվառ։

ՀՐԵՇՏԱԿ

Կրկնեց հրեշտակն — այս է դրախտի
Այս պարտիզի համասպրամ,
Բնութիւնն անմեռ, որ արժանի
Հարսներ ունի համերամ։

Ընդ շառաւիղքըն շառահար
Ծփան լուսոյն անվախճան,
Յաւերժայինն 'ի յայն անտառ
Յաստուածակերտ տեղին այն։

Յաւերժհարսից խումբն լուսալուղ
Զոյգ զոյգ կազմեն ամոլներ,
Յետախաղաց, յառաջամուղ
Կողմնաշրջիւն տան պարեր։

Պա՛ր դիւթաձեւ, կա՛յթ հիարշաւ
Կազմեն, գնան վաղվաղակ,
Մերթ յառաջեն մատն 'ի յարշաւ.
Մերթ ընկրկին կրուկ այլթաք։

Բոյլ բոյլ գնան յափունս առուին
Այն կենսաբոյր հրաշաղան,

Յետոյ դառնան նոճեաց ներքին
Ուր սօսաւիւն քրտնավան . . . :

Բաղբաղայից ծիրանակերտ
Ծայրն 'ի յուսից խլոտի,
Ընդրէն, 'ի յայտ դան հիակերտ
Մարմինք չքնաղ հողանի:

Վարդահանգոյն ուր դրօշմըն կայ,
Ընմահութեան սրբակոխ,
Այն հողանի լանջից վերայ
Ծիրանիներն խլոտող:

Եւ Աստուծոյ հրեշտակ մ'լսկոյն,
Աղաւնեթեւ լուսազարդ,
Ընդ հասանի մերձ հարսներուն
Ի մէն մի լանջ դնել վարդ:

Եզեմարոյս փունջեր ծաղկի
Ընդրաւակա՛ն պարգեւներ,
Շուշանախառն թերթք յամբկի
Բուրող անոյշ, անդ, հոտեր:

Յետոյ չքնաղ և ծաղկեփայլ,
Նազելագոյն այն հարսներ,
Թաւուտ նոճեաց ներքեւ կեցեալ
Դէմ ղուարթնոյն ծաղկաբեր:



Նուագ առին հեշտահնչիւն
Բոմբիւնք ձայնից տիրեցին . . .
Հեշտ երգերու յայտ գայ թնդիւն
Ի թրթռուն թելս քնարին:

Երենոսեայ անխուտ փայտիւ
Հիակտուա՛ծ կիթառներ . . .
Հա՛ մեղեդիք թռչին սուլիւ,
Եւ փլոկրեայ սրինգներ . . . :

Եւ դնդնչեն թելեր թրթիռք
Վնի քնարի սրտառու:
Մինչ կնդնդոյք քաղցրաձայնիկ
Հոդետաւղին օրհներգու,

Այն հրեշտակին ականջն հանէր,
Ի կայթ կոչէր զայնս կրկին,
Ուստ' 'ի նորոյ պարըն կայթէր
Խնդիւ, խնծղուլ զուարթադին:

Փունջերն 'ի լանջս հրեշտակաձոն
Նարօտ առ կախ դունալըր,
Ոստնուն, 'և ահա քրտանցըն թօն
Ի յայտ գան անդ գեղածիր:

Եւ սպասարկու խումբ մի հրեշտակ,
Սրբատեսիլ երկնահաս,

Գտան և խունկն 'ի ձեռս պսակ,
Պարավայրն անդ դաս առ դաս:

Գնել անձնիւր գլուխն հարսի
Այն հմայական պարխաղին . . . :
Ահա ով կոյս հարսներն դրախտի
Որք, անդ, յաւէտ բնակին — :

ՄԱՐԻ

Այսրն ժպտեց, և հրեշտակին,
Ասաց — էակդ յաւերժեան,
Կամիմ թռչել և յայդ դրախտին
Լոյս զգենուլ Աստուածեան:

Յիմ վեհ գլուխ պսակ չքեղ,
Յիմ չքնաղ լանջ, փունջն անձառ
Զխարդ հեշտին, զի՛ կրկնադեղ
Նշէց դրախտինն 'ի յանտառ . . . :

Ցանկամ առնուլ զծիրանին
Նշեմական հարսներու,
Այցել 'ի բոյլ ես այդ պարին
Ի 'ի կայթ ոտնուլ սրտառու:

Ապա 'նդ հարսից յաւերժական
Այտուել կայթնել սիրոս 'ի թունդ . . .



Ահ, չկամիմ ալ մի վայրկեան
Մնալ յերկիրս եղծանուտ — :

ՀՐԵՇՏԱԿ

Արկնեց զուարթունն — մտ դիր ով քոյր,
Զի՞նչ ի՞նչ եղեն յետ պարի,
Ծաւալ ածաւ խունկ բոյր 'ի բոյր,
Լսէ, քանի՞ ցանկալի:

Ի յանկարծուստ հուլք վառեցան,
Զմուռ կնդրուկ քաղցրանոյշ,
Հալուէ, յամպար, փայտ Ակերեան,
Խնկի քաղցու հոտ քնքոյշ:

Սփիւռ տալով ամպանայլին,
Ի հորիզոն բուրաբոյր,
Ամբողջ երկինքըն լնուէին,
Այսու հոտով քաղցրաբոյր . . . :

Իսկոյն, յետոյ, 'ի հապշտապ,
Աստղունք յակնթիւս պսպղուն,
Լուսին նոյնպէս առեալ շտապ
Ի տես գային նոր' համբուն:

Մոլորակաց և պարն ողջոյն
Զինքեանս կարծեալ համախառն

Յաւէրժական այն հարսներուն
Նկլին ակումբ բոլորեալ։

Ընդ Գոսիլթոնն և Լուսնթագ,
Հրատն, Արուսեակ, Փայլածուն
Եւ Ուրանոս ու Երեւակ
Ի տես եկին հոն ողջոյն։

Լուսադնդից համբուն կաճառ,
Շուրջ պարուրեալ Արեգին,
Հասին եկին մինչ նոք՝ 'ի պար
Ի կայթ յոստիւն ճեմքին։

Հիանալով հիանային
Երկնընծայից ընդ այն պար . . . ։
Յետոյ պարտեալ գունդն հրային
Պարտ վայրակոր նոյն կաճառ,

Եղեալ խոնարհ այն լուսալուղ
Հարսից առաջ Եդեմեան,
Ընդ փոյթ եղեն, շուտ յետամուղ
Հրաշից չեղեալ երկեան — ։

### ՄԱՐԻ

Այսն ժպտեց, և հրեշտակին
Ասաց — էակդ յաւէրժեան



Ցանկամ թռչել, և յայդ դրախտին
Լոյս զգենուլ Աստուածեան։

Ըղձկամ տեսնել գունդն արփաձեմ,
Եկեալ յակճիռս կալ անտի,
Հրճուիլ մայլել յիմ գեղ վսեմ,
Մինչ պար առից 'ի դրախտի։

Հուր կառք բեր ինձ զուարթունդ վեհին
Հուր կառք բեր ինձ երկնքէն,
Դրախտի փառքերն զիս թովեցին,
Թռիչ տալ կամիմ այս երկրէն . . . — ։

### ՀՐԵՇՏԱԿ

Արկնեց զուարթունն — մտ դիր ո՜վ կոյս
Ո՛ինչ ինչ եղէն յետ խաղէն,
Երբ յետ գնացին աստղունքն հրալոյս,
Լեալ անհասկիչ նոք՝ անդէն,

Ահա իսկոյն նուագ պարի
Քնարի ձևի քաղցրալուր,
Լուռ կան համբունք, և սրնգի
Ննդնդոյներ, հոտ և բոյր։

Ընդ փոյթ սայթաք հապճեպ սուզան
Այսերն անտի պարառիկ,

Մօտին 'մի վայր զարմանալան,
Ուր կան հրաշող ծիրանիք:

Ընդ ցիր և ցան ափիւռ տան վարդք,
Շուշանք անմեռ ձիւնաթոյր,
Նրբին նրբին կան, հոն, վայրայկ,
Թերթեր ծաղկանց հոտաբոյր:

Արծաթ, շափիւղ, ոսկի գոհար,
Ծաւալ ափուին յատակին,
Յաստուածաշէնն այն տաղաւար
Ուր 'ի մուտ կայ բոյլ կուսին:

Շրջաբոլոր զուարթնոյն պար
Զ'ի մուտ կուսանն զրդեն
Ոսկեղեղուն յայն տաղաւար:
Նոքա սրտի ունկնդրեն:

Կայմ է պատրաստ հոն մէն միոյն
Կան զանդրահեր պատանիք,
Անմեղ մանկտի պսակըմբռն
Հարսից, կայտառ տարփալիք:

Այն ինչ եմուտ խումբն գլխթային
Հարսից անմահ դրախտաբուն,
Շուրջ կազմեցին, 'ի կողմ եկին
Թագազարդար մանկըտոյն:



Մանկտին, կուսանն, անդ, համախառն
Համբոյր ածեն խրախուռ,
Ժպիտ, ծիծաղ, սրտերն 'ի վառ . . .
Ընձնիւրն էր, հոն, սիրատու —:

ՄԱՐԻ

Կոյսըն ժպտեց, և հրեշտակին,
Ասաց — էանկդ հիախառ,
Կամիմ թռչել և ընդ դրախտին
Յանկամ տեսնել տաղաւար:

Թո՛ղ զիս դրկէ, թող զիս փարէ
Այն տուրք ախումբ պատանեաց . . .
Յանկամ թռչել, դրախտ, բացուէ,
Հա՛ 'տե՛ թռչիմ 'ի ծոց քոյ —:

Մինչդեռ Մարին կոյսն հոգեվար,
Զայս բան ասէ սրտագին,
Ահա ժմտին գէմքըն դալար
Ի մահահոտ անկողնին:

ԼԻՕՔ
ԳՐԱԴԱՐԱՆ

Աչերն աղօ՛ հրաբխ փայլին,
Այտեր քնքոյշ վարդագոյն՝
Խարտեաշ գէսէն դուրս կու գային
Զ'ինչ նոր լուսին հրաշագոյն:

Եւ հովանի չքնաղ լանջին
Գոյն բոսորեան սպիտակխառն,
Գոգցես վարդի հետ փունջերին,
Յասմիկ շուշան էին խառն:

Գանգուր վարսեր, դէմք ծիծաղուն
Հեզիկ գլխին զինչ պսակ . . .
Աչեր նուաղ, շրթներ թրթռուն
Կարծես նոյն ինքն էր հրեշտակ:

ՀՐԵՇՏԱԿ

Կրկնեց հրեշտակն — ով քոյր ամբիծ,
Թռչիմ 'ի դրախտն Եդենեան,
Աւետեմ զքեզ յաւերժհարսից,
Ապա եկից քեզ դեսպան . . . — :

Ասաց հրեշտակն ապա յանկարծ
Վերացաւ 'ի յերկին,
Արար դրախտին սիրոյն արծարծ
Հոգեվարիկն Մարին:

## ՆՈՒԱԳ ԵՐԿՐՈՐԴ

### ՄԱՐԻ

Երբ պերճ Մարին երկնաբոյրք
Զինչ ինչ առէ 'ի մահճին,



Երբ լուրքն 'ի ցաւ, 'ի թախիծ, հոգ,
Շուրջ պար փակեն զանկողին:

Սկսեց սապէս չքնաղ Մարին,
Նոր հարսնացուն Եդենի,
— Երբ յայս աշխարհ ցաւոյ դաշտին
Ծնայ, մնայ դրդալի,

Վարուժնեկի պէս քաղցրագին,
Սիրահմայ գրկէ' գիրկ,
Աստղիկն արդի զիս կոչէին
Դաս պատանեաց քնքոյշ գիրդ:

Զմայլէին աղջկունք անոյշ
Տեսնելով զիս գեղապանծ,
Պատանեկան կրքեր շամբուշ
Արշաւէին, և նախանձ . . .

Աւխուն բոյլ շատ տարփածուաց
Առ յիս . . . այլ ես կեամ պատկառ,
Բայց նազելի պատանեկաց
Ունուրն միշտ, սիրտքն 'ի վառ:

Սա, մի միայն, պատանեկի
Կամաւ տուի սիրտ, և սէր . . .
Անոյշ տղայ, աղու հոգի,
Երազ են քեզ այս ժամեր:

Ներաղ են, ո՛հ, բայց դու մի՛ լար
Գետրէ, կայտառ պատանի,
Բաժին են ինձ դրախտն անճառ,
Հարսներ մանկունքն Եդեմի։

Քեւ հրճուեցայ դոյզն աւուրբ
Քեւ պանծայ գեղն իմ չքնաղ,
Քեզ տուի սէր միայն սիրտ սուրբ
Ել, արդ, թռչիմ վաղ ընդ վաղ . . . ։

Նուագ բամբիռն և տեսք թատեր
Հրապուրէին սիրտս անմեղ,
Հեշտաթնդիւն պարուց կայթեր
Ինձմով էին միշտ շքեղ։

Փառք աշխարհեան և անմեղ սէր,
Երբեմն 'ի սիրտ իմ լցան,
Եւ բանաստեղծք գեղջասէր
Երգ հիւսէին զովական։

Ընդ գեղահոյլ դաս կուսանին
Մնդսով ճամկով շնորհափայլ,
Որ կայր ներկայ 'ի յօթեկին
Ի տես թատեր շքափայլ։

Ել 'ի յայլմ՛ լինին, հիանան
Հուր անկանէր սրտերնին,



Տըրոփէի՛ն լանջքն 'ի խանձէն,
Եւ յաչաղով — ո՛հ, Մարին . . . —

Ըսէին միշտ, լուսին կարծեալ
Զիս 'լուսալուղ յաստեղց դէզ,
Եւ խօսէին զիմ գեղ պայծառ,
Երբ յայտ գայի 'ի հանդէս։

— Ծփծղուն լուսին պարտ է փայլել
Յաստղատարափ կամարին —
Զայս ես խորհիմ, և հոլանիլ
Գեղս առ օրեայ, զայս մարմին։

Զգենուլ լոյս, զգենուլ գեղն
Ընեղծ ճաճկին սնդուսեան,
Հարս Եդեմեան, կո՛յս երկնագեղ
Ուր շնչեցից լոյս միայն . . . ։

Եւ ես, անտի, ո՛հ, մոռացրեմ
Ծաղրել զերկրաւս եղծելի,
Գնացից ընդ պարս զարմանաձեմ
Յաւէրժհարսից լուսալի։

Թողէք զիս, արդ, հրեղէն կառքով
Վերասլանամ վեր 'ի վեր.
Մանկունքն երկրի տպուշ աչքով
Կենան առ յիս սիրտքն 'ի վէր։

Թո՛ղ, անդ, յարդգողն հայեալ ընդ իմ
Ապու՛շ կրթի հրաբաշ,
Պապղուն յեթեր թո՛ղ ծիր կաթին
Մոգի յիմ գեղ հիահրաշ։

Եւ լուսապանծ հրագունդքն այնքան
Թո՛ղ գան 'ի պար դիւթաճեմ,
Զարմանալով թո՛ղ զարմանան
Ի գեղ կուսիս լուսադէմ։

Վա՜ն իմ սին է աշխարհ, և չինչ,
Երբ յուշ ածեմ հրեշտակին՝
Ո՛յնքան ազո՜ր ա՛յնքան թովիչ
Խօսք վասն անմահ Եղիմին —։

## ՆՈՒԱԳ ԵՐՐՈՐԴ

### ՊԵՏՐՈՍ

Ընդէ՞ր, Մարի՛, ընդէ՞ր զիմ սէր
Մերժես ... հեշտ է քեզ Եղիմ,
Յոյս իմ կորեա՜ւ, սիրտս է աւեր,
Ժլա՜տ եղեր ... սի՛րտ դժխեմ։

Երա՞զ կոչես, այդպէ՞ս կամիս,
Ո՞ւր են յոյսերն, ո՞ւր այն բոց ...
Ստուերի պէս սահիս անցնիս,
Եւ ես կենամ ցնորակո՞ծ։



Ո՜ն, մոռանամ, դու զինչ ասիր,
Ի՞նչ էր խոստումդ սրտագին,
Զ՚ածէ՞ս, արդ, յուշ երբ ձայնն առիր
Ըղձքեղ դաւող հրեշտակին։

Աւա՜ղ, վարդերն անգութ լինին
Զկամին ցուցնել զիւրց ծլին
Տարաբաղդիկն պըլպուլին
Յիւրց ճիւղ կեցող լալագին ...։

Իմ երազն էր ոսկեղէն յոյս,
Զսիրտդ ունել թանկագին,
Իմ ցնորն էր իմ սրտի լոյս,
Զսէր բամբշիդ կաթողին։

Ոլոր ոլո՜ր սամոյր վարսերդ
Մանեակ կազմել իմ լանջին,
Կարմրիկ շրթներդ զինչ վարդի թերթ,
Ի տես գնել իմ աչին։

Գեղանշոյլ աչկունքդ անոյշ
Զուխտակ աստղունք լուսաթոյր,
Զորս բոլորն թարթիչք քնքոյշ՝
Քողիս թողել, սպասուր։

Զուզե՞ս մերժել հրաւէր զուաթնոյդ
Դրժող բամբշիդ իմ չքնաղ,

Եւ զեփիւռն իմ մերժես ընդ փոյթ . . .
Գնա՛, թռի՛ր վաղ ընդ վաղ — :

## ՄԱՐԻ

Պետրէ՛, մի՛ լար, ժպիտ արա՛
Նազելուհիդ չէ՛ դրժող։
Դրախտի կոյս է եդեմընծայ
Եդեմական լոյս ունող

Երկրի վաղանց վայել և փառք
Քեզ հմայեցի՛ն, պատանի՛,
Սի՛ն են, սակայն, գոյզն բերկրանք . . .
Ո՛չ ինչ ազդեն իմ սրտի։

Ծաղիկն ո՞ւր կայ՝ հոն արշաւէ
Անոյշ մեղուն ոսկեթեւ,
Ծիծաղն ո՞ւր կայ՝ հոն երազէ
Զքմեղ կուսանն զուարթաթեւ։

Քոյ սիրտ և սէր, սիրուն Պետրէ՛
Յիմ սիրտ դրոշմին անաւեր,
Մի՛ սուգ առնել . . . աչկունքդ, աղէ՛,
Զընի՛ հեղուն արցունքներ . . . :

Ո՛րքան հաճոյք, հրճիւ որքա՛ն
Եւ հեշտութիւն անանցիկ,



Երբ ՚ի դրախտին Եդեմական
Թռալթալ կայտռեմ պարաւիկ . . . — :

Եւ տարփալի բամբիշ Մարին
Երկնատոչոր սիրտն ՚ի թունդ,
Պատրաստ առնել պատառ սուգին
Հրաման կարդայր շուտ ընդ փոյթ։

Անձկաց փութով, ապա, կուսին,
Ցանկաց թռչել, ո՛հ, փութով,
«Հրեշտա՛կ, գոչեց ողէաւիկ
Հրեշտա՛կ հանի՛ հուր կառքով»։

Մնաք բարեա՛ւ քոյրեր եղբարք,
Ա՛յնքան գթա՛ծ հոգիներ,
Մնաք բարեա՛ւ մանկտի և ալք
Վերջի՛ն են այս սուղ ժամեր։

Մնաս բարեա՛ւ պատանի՛դ հէգ,
Ողջամբ կացի՛ր ո՛վ Պետրէ,
Արցունք չլինի հեղուս երբէք,
Կորեա՛ւ յոյսդ . . . լոյս քաղէ . . . — :

Ասաց Մարին, ՚ւահա չքնաղ
Շիջելավառ աչուլներ,
Որպէս ձմրան աստղունք նուաղ,
Սուզան ՚նդ ամպով թխաբեր . . . :

## ՆՈՒԱԳ ՉՈՐՐՈՐԴ

### ՀՈԴԻԷԱՌ

Մինչ 'այս մինչ այն ահա երկնի
Հոգէառինն այն հրեշտակ,
Կալեալ ձեռին նշանք դրախտի
Էջ Մարիին 'ի սենեակ:

Պարուրաձեւ կամար գօտին
Ոսկեշողուն Մէանդրեայ,
Վարակ տուաւ մէջքըն բամբշին
Դրախտահարսին նորընծայ:

Թուով հոգեակըն Մարիին,
Մարմինն եթող սառնատիպ,
Հեծաւ 'ի կառս հրեշտակային
Սաւառնեցաւ զուարթատիպ:

Ապա հրեշտակն առեալ զնա
Ի վեր տարաւ հուր կառքով,
Դնել 'ի դրախտըն գերակայ
Յաւէրժային հարսից քով:

Կառքըն գոռաց հրաշատիպար
Կոյսերն յանկծիւս եւ մանկտին,
Ունկնդրելին նուագադադար,
Ակահ լինել դղորդին:



Ահա չքնաղ դրախտին դրունք
Հարսներն եկին եւ բացին,
Ահա կոյսերն ահա մանկունք . . .
Անմեռ ընկէք Եդեմին:

Տեսին Մարին 'ի հուր կառքին
Թանգ պսակով մարգարտեան,
Շրջան առին չորս բոլորտին
Մայլել գեղոյն հրաշաղան:

Ինչպէս վճիտ մէջն առուակի
Ջինջ կերպարան Թափանցէ,
Բոլոր լուսինն 'ի գիշերի,
Բակ առեալ յաստեղց պարէ:

Այսպէս եւ զնէ կոյսն Ադենին
Բոյլք կուսանին եւ մանկան
Բոլորաշուրջ պար փակեցին
Հազար նազօք բերկրական:

## ՆՈՒԱԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### ՅԱՒԷՐԺԱՀԱՐՍՔ

Բիւրակաձայն էր բոյլն հարսից,
Դրախտանման երկնուհիք,
Գեղուեն շոյեն զնէ սիրալից
Եւ զանգրահեր պատանիք:

Ո՛վ դիցուհիք հրաշազարմեան
Ո՛ պատանիք վերնածնեալ,
Ո՛վ սուրբ Եդեմ դո՛ւ անվախճան,
Զքնաղ բնութիւն հիակերտ։

Յետոյ հրեշտակն իսկոյն ապա,
Մարին յանձնեց Եդեմին։
Նէ քայլ դրաւ 'ի վայրն անմահ
Ծաղկեզեղուն զուարթագին։

Այն ինչ Մարին մտանէ ներս.
Կոյսերն 'ի վաղ դիմեցին,
Եւ պատանիք ծիծաղերես,
Եկին 'ի տես գեղեցիկ,

Երգ երգեցին առին նուագ,
«Եկ առ մեզ, կոյս, 'ի յԵդեմ,
Դրախտն առ քեզ կայ բաց արձակ
Գիրկընդբացիկ զուարթագէմ»։

«Դու արժանի հարս կոյսդ ամբիծ
Յաւէրժային, մօտ եկուր,
Ընդ հուպ հոյլիս, յերգ ցնծալից
Ի քնար 'ի վէն հեշտալուր»։

«Նոր կոյս դու եկ առ մեզ չքնեղ
Մեզ միանալ դու յաւէրժ» —



Եւ կը շիկնէր հարսնուկն անմեղ
Նորուկ նորեկ յայն պարտէզ։

Յետոյ պերճ կոյսն, Մարին ամբիծ
Հրաշատիպար նազուհին,
Մերձ մօտ գնաց յաւէրժհարսից,
Եւ պատանեաց դրախտին։

Մերկալանջի՜կ էր, հոն Մարին,
Վարսերն արձակ 'ի ծածան.
Կարծես հերէն հուր թափէին,
Դէմքն էր շողուն շառական։

Գամ քան զգամ քաջ սիրտ առաւ,
Վեհ կոյսն, 'ի պարն այն աղուոր,
Ի բոյլն հարսից, անդ, խառնեցաւ
Աղջկանցն անմահ երկնաշնորհ։

Գոհար մանեակ պարանոցէն
Առ կախ դրին, հոլանի,
Եւ դէպ 'ի վար ձերմակ լանջէն
Բոյլ մի մարգրիտ գեղանի։

Ականակուռ պսակ հիւսկէն,
Ճակտին ամբիծ շեղակի,
Եւ ծիրանին շէկ ոսկեղէն
Յուսըն դրին հոլանի։

Անդէր կիտուած թելով ոսկեայ
Տուփն յիւր ուս ծիրանին,
Վարդահանդոյն կուրծքին վրայ
Լոյս մի ցոլայ երկնային։

Դշխոյարժան թագըն գլխին
Ակնակուռ ակնախտիղ,
Եղին, մանեակ ճարմանդ յուսին
Թանգ ակունքովըն շափիղ։

Սաթ սեւաթոյր լուսաշողուն
Գրգեց վարսից խոպոպին,
Անմեռ ծաղկունքըն գոյնզգոյն
Փունջ կազմեցին 'ի գլխին։

Յակինթն առ փայլ պսպղաց ճակտին
Մարմարակերպ 'ի միջակ,
Ասողահանդոյն շողըն լոյսին
Առ կախ հոյլ հոյլ դրասանդ։

Ի վերջ զարթուն ապա ինքեանք
Առեալ ծաղիկ 'ի ձեռինս,
Փունջ կազմեցին վարդ մանիշակ
Շուշան յակինթ և նարկիզ։

Ընդ իւր ոտիք ծաւալ ածին
Կուսին հրաշէց գեղաբոյր



Միհամուռ շուրջ բոլորեցին
Եւ նէ շիկնի կարմրաթոյր . . . ։

Ապա համբունք զան գետնամած
Մարին կենայ ժպտադէմ . . . ։
Բարէ՜ քանի՜ շուք զարմանաց
Քանի՜ հասակն էր վսեմ։

Սաւառնէին զուարթունք հոյլ հոյլ,
Գային, գնային ելեէլ,
Ի սեւ յակճիռ կային բոյլ բոյլ,
Նոր կոյս նոր հարսն ողջունել։

## ՆՈՒԱԳ ՎԵՑԵՐՈՐԴ

### ԱՆՏԱՌ ԵՒ ԵՐԳ.

Յետոյ մանկունքն և բոյլ կուսին
Լուսով փունջով ծաղկենի,
Ծնէ առեալ գիրգ՝ գրկեցին
Տանել յանտառն դրախտենի։

Ընդ մանկըտին կոյսըն համախառն
Բոյլ կազմեցին, 'ւի մի բան
Նուագ առին ոմըն կիթառ
Եւ ոմըն վէն քաղցրաձայն

«Քնար, սրինգ, երգեմք նուագ
Համուռ 'ի դաշն հեշտալուր,

Ծաղիկ քաղեմք կուսեր տղայք,
Ծաղիկ քաղեմք հոտաւոր »

« Առնումք, առնումք պատանիներ,
Դրէք 'ի կուրծ հրաշեղէն,
Քաղեմք, քաղեմք դուք ով կուսեր
Առ կախ վարսից գէսերէն »

« Ի պար կայթեմք հարսներ մանկունք,
Ի պար ոստնումք ղեւթաձեմ,
Թող խինդ, հրճիւ, բերկրանքն համբունք
Արձագանք տան 'ի ձորեմ »

« Կայթեմք, կայթեմք, պատանիներ,
Յառաջ, 'ի շուրջ սուրարշաւ,
Ոստնումք, ոստնումք դուք ով կուսեր
Քայլ փոխեցէք մատն յարշաւ »

« Մեզ նոր մի հարս, մեզ նոր մի կոյս,
Գայ և կայ 'ի մեր հոյլ,
Թող վարդ քաղէ թող շնչէ լոյս,
Քնար երգէ թող անդուլ » — :

Կոյսքն 'ի յանտառն աստուածենի,
Յանմահութեան ոլորան
Զայս երգ առին նոր' առաջի
Դրախտահարսին հրաշագան:



## ՆՈՒԱԳ ԵՕԹՆԵՐՈՐԴ

### ՀՐԱԳՈՒՆԴՔ

Ապա ընէ փութով տարին
Յայն տաղաւարն հրաշագան . . .
Եւ ամպաձեմըն ծիրանին
Արկին 'նդ ոտիւքն պատուանդան:

Պահ մի . . . ահա, նարոտաներքն
Ընդայտացաւ այն կամար,
Եւ մեծ լուսին ահա լուսն եկն
Հրաշէկ շանթեր թափ արար:

Կուսին ծածան վարսքերն 'ի վառ
Եղեն շաւիղք ոսկեծղի . . .
Գողցես մ'արփի էր լուսափառ,
Ընեղծ լոյս էր հրաշալի:

Իսկոյն ապա պարք հրագնդից,
Աստղերն, ասեմ, քիւրսն պար'
Զամպաթափառ լուսինն ամբիծ
Առեալ գնդոյն գեղատարր,

Որր գլոր եկին 'ի տես,
Յակճիռ կացին ցոլագեմ.
Լուսինն ժպտեց յայն վարսից գէս,
Որ կայր առ կախ Մ'արիէն . . . :

## ՆՋԻՃԳ ՈՒԹՆԵՐՈՐԴ

### ՄԱՐԻՆ ՅԱՒԻՐԺԱՀԱՐՍ ԳՐԱԽՏԻ

Ը՛նդ միշտ կուսանն և մանկրտին
Հ՛ուրջ ընդ խուրև խիտ առ խիտ,
Ի՛նկ բե՛նկ ծածա՛ն, թրթռան շարժի՛ն,
Ի՛նք ծիծաղի՛ դիւթաժպիտ . . . :

### ՎԵՐՋ



ՀՀ Ազգային գրադարան
NL0345273